ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՐԲԱԳՈՒՄԱՐ ԺՈՂՈՎԸ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 26-28, 1999 թ.)

Չորս ամիսներ առաջ էր, 1999 թ. հունիսին, երբ ողջ հայության սիրտը ալիքվեց ու ճմլվեց Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի վախճանման վշտից:

Ամենքի հոգիներին կապարի ծանրությամբ իջավ Մայր Աթոռ Ս. Էջմիածնից սպացված մահագույժ լուրը.

«**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը ոչ ևս է: Երկարատև ու ծանր հիվանդությունից հետո Ամենայն Հայոց 131-րդ Կաթողիկոսը հանգչեց ի Տեր... «Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի»**:

Հիրավի, ծանր է կորուստը ընտանիքի հոր, առավել ծանր, երբ հայրական այդ կերպարի մեջ համաձուլված ու զուգակշռված են ամենաբազմազան ձիրքեր ու շնորհներ, երբ այդ կերպարի հետ բազմաթիվ երազներ ու իղձեր կան կապված :

Սակայն, «**ով կարող իցէ քննել զխորս Աստուծոյ**», ինչպես իրավացիորեն բարբառում է սաղմոսերգուն, «**մեկնեցաւ ի մէնջ հոգի արդարոյն**», և հավատացյալ հայորդիք անձկությամբ սպասում էին կաթողիկոսական նոր ընտրություններին:

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի մահվանից հետո Կաթողիկոսական Տեղապահ ընտրված Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի և Երուսաղեմի ու Պոլսո հայոց Պատրիարքներ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի նախագահությամբ պարբերաբար գումարվող Եպիսկոպոսաց ժողովներում մեկ առ մեկ կանոնակարգվում ու կազմակերպչական համապատասխան աշխատանքներ էին կատարվում կաթողիկոսական ընտրությունների անցկացման համար:

Եպիսկոպոսաց ժողովի կողմից որոշում է կայացվում Ազգային-եկեղեցական ժողովը (այսուհետև՝ ԱԵԺ) գումարել հոկտեմբերի 26-31-ը:

Կազմակերպչական ընթացիկ աշխատանքներն իրականացնելու համար ընտրվում է եռանդամ հանձնախումբ, որի կազմում ընդգրկվում են ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանը (ատենապետ), և հանձնախմբի անդամներ՝ Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը և Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզնիկ եպս. Պետրոսյանը:

Հանձնախմբի ջանադիր աշխատանքի արդյունքում արդեն հոկտեմբեր ամսվա առաջին կեսին ԱԵԺ-ի գումարման համար լուծվել էին կազմակերպչական բոլոր խնդիրները: Թեմերից ամբողջովին ստացվել էին անհրաժեշտ

փաստաթղթերը և ճշտվել ժողովին մասնակցող պատգամավորների անունները: ԱԵԺ-ին մասնակցելու իրավունք էին ստացել 456 պատգամավորներ:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26, ԵՐԵՔՇԱԲԹԻ

Մ. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Անցան ԱԵԺ-ին նախորդած փոքր-ինչ լարված իրավիճակները, ու բորբոքված կրքերը մարեցին, և արդեն հոկտեմբերի 26-ի առավոտյան երկրագնդի տարբեր անկյուններից ի մի խմբված հայորդիները սեփական առաքելությունը գիտակցողի վստահաքայլ ընթացքով մուտք գործեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Այդ օրը բազմամարդ էր Մայր Աթոռի շրջափակը: Կարծես հայոց հին օրերի պատմությունը հյուսող պատմիչների երկերի էջերից կենդանացել էին երբեմնի հովվապետերի ընտրություններին մասնակցած հայորդիները. «**Եւ ժողովէին երիցունք և սարկաւագունք բազում. և նախանձաւոր պաշտաւնեայք և համարէն ուխտ սրբոյ եկեղեցւոյ, իշխանք ամենայն՝ գաւառապետաք, գաւառակալք պետք, բռնաւորք, զաւրագլուխք, հազարաւորք, կուսակալք, ազատք կողմանց կողմանց, աւագ նախարարք աշխարհին Հայոց՝ որք էին նախանձախնդիր աւրինաց և սրբութեան, յընտրել և կարգել քահանայապետ Եկեղեցւոյ Քրիստոսի**» (Կանոնագիրք):

Կապույտ երկնքի վրա գրոհած ամպերի եզրից մերթ ընդ մերթ ճառագող արեգակի շողերն առավել տեսանելի էին դարձնում Մայրավանքի շրջափակում հավաքվածների դեմքերին արտահայտվող ներքին հուզումն ու սպասողականությունը: Ամենքին հուզում էր մեկ խնդիր. ո՞վ է լինելու Լուսավորչի գահի ժառանգորդը:

Ժամը 10.00-ին Մայր Տաճարում ղողանջող զանգերը ազդարարեցին Ս. Պատարագի սկիզբը:

Խորհուրդ խորին...

Այո, խորին խորհուրդ էր:

Պատարագիչն էր Վիգեն եպս. Այքազյանը: Պատարագի ընթացքում հնչած աղոթքներն ու սրբասացություն-մեղեդիները, խունկի հոտի քաղցրաբավալ տարածումով, կրոնաբույր հաճելի մթնոլորտ էին ստեղծում: Ս. Պատարագի ընթացքում պատգամավորները հաղորդություն ստացան՝ ճաշակելով Քրիստոսի Մարմինն ու Արյունը: Տաճարում շրջում էր կարծես երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի հոգին, և Մայր Տաճարի

պատերից արձագանքում էր նրա հզոր ձայնը. «**Վերադարձ արմատներին ու ինքնությանը**»:

Կաթողիկոսական Տեղապահի ու Պատրիարք Հայրերի նախագահությամբ հոգևորականաց ու աշխարհականաց դասը հավարտ Ս. Պատարագի, որպես ինքնությանը դառնալու մի հանգրվան, բոլորվեց հանգուցյալ Գարեգին Ա Կաթողիկոսի շիրմի շուրջ և հարգանքի տուրք մատուցեց երանաշնորհ Հայրապետի հիշատակին. կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն: Հոգեհանգստից հետո բոլոր պատգամավորները հավաքվեցին Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նախկին շենքում՝ սիրո ճաշի, որից հետո Վեհարանի ԱԵԺ-ի նախապատրաստման գրասենյակում ժամը 14.00-ին սկսվեց պատգամավորների հաշվառումը, որի ընթացքում արձանագրվեցին 451 պատգամավորներ:

ՀԱՄԵՐԳ ԵՎ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԱՅԻ ՓՈՔՐ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Բավականին ժամանակ տևած գրանցումից հետո պատգամավորներն ասպիճանաբար հեռացան՝ ոմանք Երևան՝ իրենց իջևանած հյուրանոցները, մյուսները՝ հոգևորականներից շատերը՝ Մայրավանքում իրենց համար պատրաստված հյուրասենյակները:

Երեկոյան ժամը 20.00-ին պատգամավորներին նոր անակնկալ էր սպասվում: 1700-ամյակի տոնակատարության վարիչ-քարտուղար Մեսրոպ արքեպս. Աշճյանի նախաձեռնությամբ Երևանի Ֆիլհարմոնիայի փոքր դահլիճում կազմակերպվել էր երեկույթ՝ նվիրված հոգելույս Գարեգին Ա Հայրապետի հիշատակին: Ճիշտ ժամանակին դահլիճում պատկառելի հասարակություն էր հավաքվել՝ հոգևորականաց դասը՝ գլխավորությամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի, Պատրիարքներ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի, Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի, և աշխարհական անձինք:

Երեկույթի ընթացքում ներկաներին հաճելի տրամադրություն պարգևեց խմբավար Հարություն Թոփիկյանի կամերային երգչախումբը: Վերջինիս կատարմամբ հնչեցին Կոմիտասի և Բարսեղ Կանաչյանի ստեղծագործությունները: Հայտագրի երաժշտական մասի ներկայացումից հետո տեղի ունեցավ Գարեգին Ա Վեհափառ Հայրապետի հիշատակին նվիրված գրքի շնորհանդեսը:

Հատորը պարունակում է հանգուցյալ Վեհափառ Հայրապետի և իտալացի երիտասարդ ասպվածաբան Ջովաննի Գուայտրայի երկխոսությունները, որոնց ընթացքում նախաձեռնող հեղինակի հարցերին տված պատասխաններում լավագույնս արտացոլվում են հոգելույս Գարեգին Ա

Վեհափառ Հայրապետի եկեղեցաբանական ըմբռնումներն ու խորհրդածական բազմաձալք աշխարհը:

Նշենք, որ հատորը նախապես տպագրվել էր ֆրանսերենով և ապա թարգմանվել հայերենի: Հիրավի հանգուցյալ Վեհափառ Հայրապետի հիշատակին մատուցված հարգանքի ու խոնարհումի ինքնօրինակ այս տուրքը հաչս երեկոյթին ներկա հայորդյաց ևս մեկ անգամ շեշտում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր դերը և լռելյայն առավել նախանձախնդրություն ներշնչում կաթողիկոսական նոր ընտրությունների նախաշեմին:

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ

ՆԻՍՏ I

ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԸ

Առավոտյան ժամը 10.00-ին Վեհարանի հանդիսությանց դահլիճում սկսվեց Ազգային-Եկեղեցական սրբազումար ժողովի առաջին նիստը:

Աշխարհի չորս ծագերից հավաքվել էին բազմաթիվ հայորդիներ՝ տարբեր իրենց հագուկապերով, տարբեր հեստաքրքրություններով ու աշխարհայացքներով և հայերենի արտաբերման առոգանությամբ նրանց, սակայն, միավորում էր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ու հայրենի եզերքի նկատմամբ սերը և հանուն հայրենական սրբությունների բոլորանվեր զոհաբերության պատրաստակամությունը: Ժողովին ներկա լրագրողների կրծքերին փակցված հավատարմագրերը ցոլացնում էին լրագրային աշխարհի գեղեցիկ խճանկարը:

Պատգամավորներն ըստ թեմերի տեղեր գրավեցին դահլիճում ցուցանակներով սահմանագծված համապատասխան շարքերում, և ԱԵԺ-ի կազմակերպման հանձնախմբի ատենապետ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը, ողջունելով ժողովականներին, ժողովը հայտարարեց բացված: Ապա Սրբազան Հայրը տեղեկացնելով, որ ընտրված 455 պատգամավորներից նախորդ օրը գրանցվել է 451 հոգի, կատարեց պատգամավորների ստուգում: Հաշվառումների արդյունքում պարզվեց, որ ժողովին ներկա են 440 պատգամավոր (բացակայում էին 11 պատգամավոր):

Այնուհետև ժողովասրահ մուտք գործեցին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Երուսաղեմի ու Պոլսո հայոց Պատրիարքներ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանն ու Տ. Մեսրոպ արքեպս. Մութաֆյանը, ովքեր տեղեր գրավեցին ժողովի նախագահությունում: Ժողովի նախագահության հետ դահլիճ մուտք գործեց նաև Կրոնի գործոց պետական խորհրդի նախագահի պաշտոնակատար Լևոն Մկրտչյանը:

Պետք է նշել, որ, ըստ նախապես կազմված ժամանակացույցի, նիստին ներկա էր լինելու նաև ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը: Հանրապետության նախագահը, սակայն, պետական անհետաձգելի գործերի պատճառով նիստից առաջ հայտնել էր իր՝ ժողովին մասնակցել չկարողանալու մասին: Այս իսկ պատճառով Կաթողիկոսական Տեղապահը ձայնը տվեց ՀՀ նախագահի կողմից լիազորված Լ. Մկրտչյանին: Վերջինս ներկաներին դիմեց հետևյալ խոսքով.

«Ամենապատիվ Կաթողիկոսական Տեղապահ, Ամենապատիվ Պատրիարքներ, Սրբազան Հայրեր, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, Ազգային-Եկեղեցական ժողովի պատգամավորներ.

Թույլ տվեք ՀՀ նախագահի, ԱԺ նախագահի, վարչապետի անունից ողջունել Ազգային-Եկեղեցական ժողովին, որը պետք է ընտրի Ամենայն Հայոց 132-րդ Հայրապետին: Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին է սևեռված համայն հայության ուշադրությունը, և դա բնական է, քանզի Հայ Առաքելական Եկեղեցին հիմնարար և առանձնահատուկ դերակատարություն ունի մեր պատմության մեջ: Հայ հոգևորականը դարեր շարունակ իր հոտի հետ տոկացել է փորձություններին՝ խաչով, խոսքով, գործով, և ի հարկին սրով պաշտպանել և զորավիգ է եղել հայրենիքին, նրա անկախ պետականությանը: Հատկապես վերջինիս կորստից հետո Եկեղեցին իրականացրել է նաև հայապահպանության ծանր ու պատասխանատու առաքելությունը: Այն հզոր մի պատվար է եղել, որը պահպանել և սերունդներին է հասցրել հայ հոգևոր մշակույթի հարստությունը: Վստահ ենք, որ ժողովը, հավատարիմ պատմական ավանդույթներին, կկարողանա արժանիների մեջ ընտրել Ս. Գրիգոր Լուսավորչի գահի ժառանգորդին, որը հայ ժողովրդին կառաջնորդի դեպի 21-րդ դար:

Ցանկանում ենք Ձեզ ստեղծագործական աշխատանք՝ ի փառս հայ ժողովրդի և հայրենիքի»:

Տիար Լևոն Մկրտչյանի ողջույնի խոսքին հաջորդեց Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի հաշվետու զեկույցը, որում Սրբազան Հայրը հանգամանալից կերպով անդրադարձավ տեղապահության չորս ամիսների ընթացքում կատարված աշխատանքներին (զեկույցը տե՛ս էջ 85):

Խոսքի ավարտին Կաթողիկոսական Տեղապահը շնորհակալություն հայտնեց եպիսկոպոսաց դասին, Մայր Աթոռի ողջ միաբանությանն ու պաշտոնեությանը, ինչպես նաև ՀՀ պետական այրերին՝ ԱԵԺ-ի կազմակերպման աշխատանքներին սատարելու համար:

Այնուհետև ձայնը տրվեց ԱԵԺ-ի կազմակերպման հանձնախմբի ատենապետ Տ. Վահե արքեպս. Հովսեփյանին: Վերջինս ընդհանուր գծերով

ներկայացրեց ժողովի կազմակերպման ընթացքը, ինչպես նաև քննարկվելիք հարցերի ցանկը:

Ապա ժողովի նիստը նախագահող Երուսաղեմի հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանի գլխավորությամբ անցում կատարվեց օրակարգի հաջորդ հարցին՝ դիվանի ընտրությանը:

Նախ ընտրվեցին ատենադպիրները: Ընտրության արդյունքում առաջին ատենադպիր դարձավ **Աբրահամ եպս. Մկրտչյանը (առաջնորդ Սյունյաց թեմի)**, իսկ երկրորդ ատենադպիր՝ **Գրիգոր վրդ. Մագուդյանը (ԱՄՆ Արևելյան թեմ)**:

Ապա նաև ընտրվեցին դիվանի անդամները.

1. **Տ. Մերովբե վրդ. Իսախանյան (Գերմանիայի թեմ)**
2. **Տ. Դերենիկ աբեղա Դավթյան (Գուգարաց թեմ)**
3. **Տ. Արշակ քհն. Խաչատրյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
4. **Տ. Արամ քհն. Հունանյան (Հարվ. Ռուսաստանի թեմ)**
5. **Տ. Շնորհք քհն. Դեմիրճյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
6. **Տ. Նարեկ քհն. Բերբերյան (ԱՄՆ Արևելյան թեմ)**
7. **Անդրանիկ Ջինգյլս (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
8. **Դոկ. Սարգիս Քեհյայան (Գերմանիայի թեմ)**
9. **Խաժակ Քոնիալյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
10. **Եղիա սրկ. Ջենդյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
11. **Պարույր սրկ. Տեր-Մկրտչյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
12. **Անդրանիկ Զորանյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
13. **Վարուժան Ալթարմաքյան (ԱՄՆ Արևմտյան թեմ)**
14. **Արեն Ջեբեջյան (ԱՄՆ Արևելյան թեմ)**

Վերջիններիս պարտականության մեջ էր մտնում բաց քվեարկությունների ընթացքում քվեների հաշվումը և պատգամավորների՝ ձայն խնդրելու դեպքում՝ ժողովի նախագահին տեղյակ պահելը:

Այնուհետև տեղի ունեցան ԱԵԺ-ի դիվանի ատենապետի և փոխատենապետի ընտրությունները:

Ատենապետի ընտրության համար առաջարկվեցին երկու թեկնածուներ՝ Սերգեյ Համբարձումյան (Արարատյան Հայրապետական թեմ) և Սիմոն Եզնիկ Պալյան (ԱՄՆ Արևելյան թեմ): Ձայների գերակշռող մեծամասնությամբ ատենապետ ընտրվեց ԳԱԱ փոխնախագահ, ակադեմիկոս **Սերգեյ Համբարձումյանը**, իսկ **Սիմոն Եզնիկ Պալյանը** քվեարկվեց և ընտրվեց փոխատենապետի պաշտոնում:

Դիվանի ընտրությունից ու ձևավորումից հետո եկավ այն պահը, երբ պետք է ճշգրտվեին անունները Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություններում քվեարկվելիք թեկնածուների:

Ըստ օրինի, թեկնածուներ են համարվում Հայ Եկեղեցու բոլոր եպիսկոպոսները, քանի դեռ հանդես չեն եկել ինքնաբացարկով: Այս իսկ պատճառով ԱԵԺ-ի կազմակերպման հանձնախմբի ատենապետ Տ. Վաչե արքեպս. Հովսեփյանը մեկ առ մեկ ընթերցեց բոլոր եպիսկոպոսների անունները: Արդյունքում մնաց երկու թեկնածուի անուն.

1. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյան,

2. Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյան:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Այս որոշակիացումից հետո հայտարարվեց ընդմիջում, որից հետո՝ ժամը 14.30-ին, ԱԵԺ-ի բոլոր պատգամավորները հավաքվեցին Մայր Տաճարում, որտեղ նախ կատարվեց հաշվառում: Ներկա էին 450 պատգամավոր:

Ապա ստեղծվեցին աշխատանքային հետևյալ երեք հանձնախմբերը՝

1. Քվեախույզ հանձնախումբ՝

Տ. Աղան արքեպս. Պալիոզյան (Առաջնորդ Ավստրալիայի հայոց թեմի)

Տ. Ավագ արքեպս. Ասատուրյան (Առաջնորդ Իրաքի հայոց թեմի)

Աշոտ Ղազարյան (Արարատյան Հայրապետական թեմ)

Արթո Բաամաջյան (Կանադայի հայոց թեմ)

Սուրեն Սահակյան (Հարավային Ռուսաստանի թեմ)

Մարտին Թադեոսյան (Շիրակի թեմ).

2. Առաջարկներ բանաձևող հանձնախումբ՝

Տ. Զավեն արքեպս. Չինչինյան (Առաջնորդ Եգիպտոսի հայոց թեմի)

Տ. Գարեգին արքեպս. Բեզչյան (Առաջնորդ Գերմանիայի հայոց թեմի)

Տ. Նորվան եպս. Զաքարյան (Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակի փոխանորդ)

Ռաֆայել Պապայան (Անդամ Գերագույն Հոգևոր Խորհրդի)

Լուիզ Բակար (Կ. Պոլսի Պատրիարքություն).

3. Գնահատանքի և շնորհակալության հանձնախումբ՝

Տ. Նաթան եպս. Հովհաննիսյան (Առաջնորդ Ուկրաինայի հայոց թեմի)

Տ. Եզնիկ եպս. Պետրոսյան (Առաջնորդ Հարավային Ռուսաստանի հայոց թեմի)

Տ. Արարատ ծ. վրդ. Գալթաքչյան (Կանադայի հայոց թեմ)
Տ. Եղիշե ավագ քհն. Սարգսյան (Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբանություն):

Այնուհետև Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի երդմնեցուցչությամբ կատարվեց պատգամավորների երդման արարողությունը, որի ընթացքում պատգամավորներն ուխտեցին ընտրությունը կատարել բացառաբար խղճի մտոք և Եկեղեցու գերագույն շահը նկատի առնելով՝ վեր ամեն տեսակ անձնական ու նեղ հաշիվներից:

«Ես, ի ներքո սորին անուանեալ աշխարհական պատգամաւոր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան, խոստանամ և երդնում Ամենակարողն Աստուած՝ առաջի Սրբոյ Աւետարանի Նորա առ այն՝ թէ ցանկամ և պարտիմ յայսմ առաջիկայ ընտրութեան Ծայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի Ամենայն Հայոց վասն բարձրագոյն կառավարութեան Սուրբ Եկեղեցւոյ Հայաստանեայց և տեսչութեան եկեղեցականաց նորին ըստ մաքուր խղճի մտաց և պարտուց իմոց առանց իրիք աչառութեան և անձնական ակնկալութեանց, ի բաց հերքելով յինէն զամենայն մախանս թշնամութեան և կամ զորպիսի և իցէ շաղկապս մերձաւորութեան և բարեկամութեան, ընտրել ի միջոյ հոգևորականաց հայրենի՝ Հայաստանեայց Եկեղեցւոյն իմոյ զայնպիսի անձն, զոր ըստ յատկութեանց հանճարոյ և խղճի մտացն առաւել ընդունակագոյն և արժանաւորագոյն համարիմ ես, և յորմէ ակն ունիմ, զի ի կատարումն պարտաւորութեանց իւրոց՝ զորս դնէ ի վերայ նորա վեհ ասպիճանն այս հոգևոր, հանդիսացուցէ նա զինքն ջերմեռանդն պաշտօնեայ Աստուծոյ և հոգունակ տնօրէն բարօրութեան և օգտի Եկեղեցւոյն Քրիստոսի և նմա հաւատացեալ Հայրապետական իշխանութեանն ի վերայ բանաւոր հօտին Քրիստոսի:

Իսկ եթէ այլազգ վարեցից, յայնժամ իբրև անհոգ զօգտէ Եկեղեցւոյ և ճշմարիտ որդւոց նորին, յորում է սեպհական օգուտն իմ, արկանեմ զանձն իմ ընդ մեղադրանօք եղբայրակցաց իմոց և ի հանդերձելումն պատասխանատուութեան առաջի Աստուծոյ և ահեղ դատաստանի Նորա: Ի վախճան երդման իմոյ վասն անաչառ ընտրութեան համբուրեմ զԲան և զԽաչ Փրկչին մերոյ»:

Առհասարակ, կաթողիկոսական ընտրությունները անցկացվում են երեք փուլով: Առաջին փուլից հետո մնում են առավելագույն ձայներ ստացած առաջին երեք թեկնածուները, երկրորդ փուլից հետո՝ երեքից երկուսը, իսկ երրորդ քվեարկությամբ արդեն որոշվում է Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը: Սակայն այս անգամ, քանի որ ի սկզբանե իսկ թեկնածուները երկուսն էին, ժողովում որոշում կայացվեց ընտրված համարել նրան, ով

կիսպեր առկա ձայների հիսուն տոկոս՝ գումարած մեկ սահմանագիծը, այսինքն՝ 226 ձայն:

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո սկսվեց բուն քվեարկությունը: Հուզումն ու լարումը դարձել էին բոլոր ներկաների և Մայր Տաճարի բակում ու նույնիսկ Մայրավանքի մուտքի դարպասի առջև խռնված հավատացյալ հայորդիների ու լրագրողների ներքին ապրումների գերակշռող զգացումը:

Մեկ ժամ, երկու, երեք ... Ժամանակը կարծես կանգ էր առել: Բակում ներկա եղողներից ոմանք խումբ-խումբ հավաքվել էին, վերլուծումներ ու ենթադրություններ էին անում, ուրիշները «գաղտագողի» մոտեցել էին Տաճարի դռներին և փորձում էին որսալ ամեն մի շշուկ ու ձայն, որը քիչ թե շատ պատկերացում կտար ներսում ծավալվող դեպքերի ընթացքի մասին:

Եվ այս պահին ... Անթեղված ուրախության ու ցնծության այս պահին, որ ուր որ էր, պետք է թնդային ընտրյալ նոր Կաթողիկոսին ողջունող ծափերն ու աղաղակները, Տաճարի շուրջ հավաքվածների միջով կարծես մի սառը հոսանք անցավ: Մի քանիսը վազքով հեռացան, մյուսների դեմքերը գունատ, ճեպի-ճերմակ էին դարձել: Ամենուր քչփչում ու տագնապահար քննարկում էին ինչ-որ հարց, որը նույնիսկ անծանոթ դիտորդի համար պարզ կլիներ, թե որևէ առնչություն չունի Տաճարում տեղի ունեցող իրադարձության հետ:

Վերջապես պայթեց բոթը: Ազգային ժողովում տեղի էր ունեցել անկանխատեսելի: Ահաբեկչական գործողությանը զոհ էին գնացել հայոց պետական-քաղաքական ընտրանու ականավոր այրեր՝ ԱԺ նախագահ Կարեն Դեմիրճյանը, ՀՀ վարչապետ Վազգեն Սարգսյանը, ԱԺ նախագահի տեղակալներ Յուրի Բախշյանը և Ռուբեն Միրոյանը, պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Միքայել Քոթանյանը և Հենրիկ Աբրահամյանը, նախարար Լեոնարդ Պետրոսյանը:

Բնականաբար, այս գույժը մթագնեց սպասվող ուրախությունը, և ամենքի մտասևեռումը գերակշիռ չափով տեղափոխվեց ողբերգական այս եղելության վրա:

Տաճարի ներսում խաղաղ էր: Դեռ ոչ ոք տեղեկություն չուներ սահմռկեցուցիչ դեպքի մասին: Ոմանք «ավետաբերի» ոգևորությամբ փորձեցին լուրը տաճար հասցնել, սակայն, փառք Աստծու, սառնասրտությունը հաղթեց, և տղայական կամ գուցե դիտումնավոր խանդավառությունը մարեց:

Էլի մի ժամ, կրկին Մայր Աթոռի ժամացույցից հնչեցին մի քանի զարկեր, և քվեարկությունն ավարտված է:

Արդեն իր լիազորությունների մեջ մտավ քվեախույզ հանձնախումբը, որի հետ միաժամանակ, թե՛ Տաճարի ներսում և թե՛ նրա շուրջը հավաքվածներից շատերը, չսպասելով պաշտոնական հայտարարության, ձայները մեկ առ մեկ արձանագրում էին թեկնածուներից մեկի կամ մյուսի անվան դիմաց: Իսկ այդ ընթացքում ...

- Գարեգին ա՛րքեպիսիսկոպոս, Գարեգին ա՛րքեպիսիսկոպոս, Գարեգին ա՛րքեպիսկոպոս, Ներսես ա՛րքեպիսիսկոպոս,- ամբողջ փարածքով արձագանքում էր քվեախույզ հանձնաժողովի անդամ Աղան արքեպս. Պալիոզյանի հպրու ձայնը:

Ժամերը նորից ձգվում էին՝ առանց որոշակի պատկերացում տալու քվեարկության վերջնական արդյունքի մասին:

Վերջապես՝ ավարտվեց ...

Սառը քրտինքը, որը գոյացել էր ԱԺ-ի արյունալի դեպքերին տեղյակ մարդկանց դեմքերին, ասպիճանաբար վերացավ, և Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության ավարտը կարծես լույսի ու հույսի նոր շողեր պարգևեց նրանց: Կատարված քվեարկության արդյունքում Ամենայն Հայոց 132-րդ Կաթողիկոս ընտրվեց Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Ձայները բաշխվեցին հետևյալ կերպ՝

Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյան -	**276 ձայն,**
Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյան -	**163 ձայն,**
Անվավեր համարվեցին -	**11 քվե**
Ընդամենը՝	**450 ձայն:**

Այսպիսով Ամենայն Հայոց Կաթողիկոս հռչակվեց Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը և վերանվանվեց

Գարեգին Բ Հայրապետ:

Անմիջապես հետո նորընտիր Գարեգին Բ Կաթողիկոսը Հայրապետական զավազանը ձեռքին բարձրացավ Իջման Ս. Սեղան և հավատացյալներին հղեց իր անդրանիկ պատգամը (տես էջ 6), որում իր ջերմ սերն ու նվիրումը արտահայտելով Հայոց դարավոր Եկեղեցու նկատմամբ՝ Աստծու օժանդակությունը հայցեց՝ ծանրագույն լուծը պատվով տանելու համար: Ընթացքում խոսքը մի պահ ընդմիջվեց: Հայրապետին փոխանցեցին մի երկտող, և դեղնավուն թղթիկի վրա հապճեպորեն արված խծբծոցի բովանդակությունը այլափոխեց Վեհափառի դեմքը:

Տեղեկացավ ...

Ցնցումը մեծ էր. և փոքր-ինչ դադարից ու ինքնատիրապետումը վերագտնելուց հետո Վեհափառ Հայրապետը կատարվածի մասին տեղյակ պահեց նաև ներկաներին, և սրտաբուխ աղոթքով առ Աստված, որպեսզի Տերը հանգստություն շնորհի ննջեցյալների հոգիներին և խաղաղություն՝ Հայաստան աշխարհին, ավարտեց:

Հնչեցին Մայր Տաճարի զանգերը՝ ցնծագին ու հանդիսավոր: Եվ ուրախություն, և՛ թախիծ, և՛ տագնապ, և՛ հույսի շողարձակում կար ամենքի դեմքին:

Հակասական ու իրարամերժ զգացումները հաջորդում էին մեկը մյուսին:

Բայց՝ Էջմիածինը հաղթեց ...

ՌԻՍԻՉՈՒ ՎԻԶՂԳԻԺ

ՅԺՈՍՊ ՎՏՊԻՍ ՎՏՁԱՆՈՅԵՈՒ ՅԿՏՂՅՍՍՂ

«Է՛ջ Միածինն ի Հօրէ
Եւ լոյս փառաց ընդ նմա»:

Հնչեցին հաղթական երգի բառերը. և «փառքի լույսը» նոր հույսերով ու մխիթարություններով ի բաց վանեց հուսաբեկումն ու թախիծը: «Փառքի լույս»-ով էլ Գարեգին Բ նորընտիր Հայրապետի գլխավորած հոգևորականաց ու աշխարհականաց թափորը դանդաղաքայլ մուտք գործեց Վեհարան: Գահասրահում պատգամավորներն ու ներկաները ստացան Վեհափառի անդրանիկ օրհնությունն ու աջհամբույրով իրենց բարեմաղթանքները հայտնեցին նորընտիր Հայրապետին:

28 ՀՈԿՏԵՄԲԵՐ, ՀԻՆԳՇԱԲԹԻ

ՆԻՍՏ II

Նախորդ օրվա ծանրաբեռնված աշխատանքներից հետո ԱԵԺ պատգամավորներն ու մեծաթիվ լրագրողներ կրկին հավաքվել էին Վեհարանի հանդիսասրահում՝ մասնակցելու երկրորդ նիստին: Մի քանի րոպե անց սրահ մուտք գործեց նորընտիր Գարեգին Բ Հայրապետը՝ Երուսաղեմի հայոց Պատրիարք Թորգոմ արքեպս. Մանուկյանի և Կ. Պոլսո հայոց Պատրիարք Մեսրոպ արքեպս. Մութաֆյանի ուղեկցությամբ:

Շատերի դեմքերին զգացվում էր նախորդ օրվա ուժգին ցնցման հոգնությունը: Նորընտիր Հայրապետը ինքն էլ մտահոգ էր և ավելի ինքնամփոփ. ուշքն ու միտքը երեկ կատարված ողբերգական դեպքերն էին, որոնց չարաբաստիկ հեղինակները տակավին ձերբակալված չէին և ԱԺ-ում պատանդ էին վերցրել շուրջ հիսուն պատգամավորների:

Նիստը բացվեց: Բոլորը ջերմեռանդ արտասանեցին «Հայր մեր»-ը, ապա Վեհափառ Հայրապետը «Հոգւոց» արտասանեց ահաբեկչական գործողությանը զոհ գնացած նահատակների հոգիների համար: Այնուհետև ի լուր ներկաների ընթերցվեց Գարեգին Բ նորընտիր Կաթողիկոսի ցավակցական գիրը՝ ուղղված ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին և համայն հայ ժողովրդին (տես էջ), որում Նորին Սրբությունն իր վրդովմունքն ու վիշտն էր հայտնում եղերական ոճրի առիթով: Խոսքի ընթացքում ստացվեց ահաբեկիչների ձերբակալման և պատանդ պատգամավորների ազատ արձակման լուրը, որը նյարդային ու լարված մթնոլորտը բավականին մեղմեց, և ժողովն անցավ օրակարգային իր հաջորդ խնդրին:

Զայնը տրվեց ԱԵԺ կազմակերպման հանձնաժողովի ատենապետ Վաչե արքեպս. Հովսեփյանին: Վերջինս, որ հոգեոլոյս Գարեգին Ա Հայրապետի օրոք գլխավորում էր Հայց. Առաքելական Եկեղեցու Սահմանադրության պատրաստման աշխատանքները, առաջարկեց, որ ԱԵԺ-ը որոշում կայացնի, «**որ նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսը 2000 թ. հունիս**

ամսվա մեջ ներկայացուցչական ժողով հրավիրի՝ բոլոր եպիսկոպոսների և թեմական խորհուրդներից մեկական ներկայացուցիչների մասնակցությամբ, և լիազորի ներկայացուցչական ժողովին, որպեսզի այն Նորին Սրբության նախագահությամբ հանգամանորեն նկատի առնի եպիսկոպոսաց ժողովից բերված հարցերը և ներկայացված կանոնադրության վերջին նախագիծը, և այն վավերացնելուց հետո ուղարկվի բոլոր թեմերին՝ առ ի գործադրություն»:

Այս խնդրի հետ կապված ուրիշ առաջարկներ ևս եղան, և քվեարկությամբ որոշվեց եպիսկոպոսաց և թեմական խորհուրդներից լիազորված մեկական պատվիրակների համատեղ ժողովը՝ նորընտիր Հայրապետի նախագահությամբ, գումարել ոչ ուշ, քան 2000 թվականի հոկտեմբերը: Այնուհետև ներկաներին ընթերցվեց ԱԵԺ-ի ուղերձը ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանին և ողջ հայ ժողովրդին՝ ողբերգական դեպքերի կապակցությամբ:

Նիստի ավարտին ամփոփիչ խոսքով հանդես եկավ նորընտիր Գարեգին Բ Կաթողիկոսը: Իր երախտագիտությունը հայտնելով բոլոր պատգամավորներին ու ներկաներին՝ ԱԵԺ-ի ընթացքում դրսևորած պատասխանատվության համար, Նորին Սրբությունը, վկայակոչելով ստեղծված բացառիկ իրավիճակը, ԱԵԺ-ն փակված համարեց:

Ժողովականները երգեցին «Հայր մեր»-ը, և նորընտիր Հայրապետը «Պահպանիչ»-ով ամենքի համար Տիրոջ պահպանությունը հայցելով՝ հրաժեշտ տվեց ներկաներին:

Հաջորդ երկու օրերին Վեհափառ Հայրապետի նախագահությամբ տեղի ունեցան Եպիսկոպոսաց ժողովներ, որոնց ընթացքում քննության առնվեցին այն խնդիրները, որոնք դեպքերի բնականոն ընթացքի դեպքում պետք է քննարկվեին ԱԵԺ-ում: Որոշվեց նաև նախապես հոկտեմբեր 31-ին նախատեսված նորընտիր Հայրապետի Ձեռնադրության և Օծման արարողությունները հետաձգել:

ՄԻՍԺՑՈՒՄՊԱՇ ՎԻՍՆՍՔ ՊՈԿՈՑՁՆԳԿԳ-ՊՎԷՈԵՇՈ

ՀՏԳԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԿՏՂԵՎՍՂ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԻՍՆԱՔ